

**ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ  
ԲԺՇԿԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

ՖԱԿՈՒԼՏԵՏ	ԲՆԱԳԻՏԱԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ
ԱՄԲԻՈՆ	ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՐԱ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՅԻ
ԱՌԱՐԿԱՅԻ ԱՆՎԱՆՈՒՄ ԵՎ ԸՆԹԱՑԻԿ ՍՈՂՈՒԼԸ	ԲԺՇԿԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԻՉ ԵՎ ՍՈՂՈՒԼՆԵՐԻ ՔԱՆԱԿ	0905B4/26
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ	ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ԿՈՒՐՍ/ԿԻՍԱՄՅԱԿ	4-րդ կուրս / 2-րդ կիսամյակ
ԴԱՍԸՆԹԱՅԻ ՆՊԱՏԱԿԸ	<ul style="list-style-type: none"> <li>• Ստեղծել պատկերացում բժշկական աշխարհագրություն գիտության, նրա հետազոտության օբյեկտի ու մեթոդների, տեսական ու կիրառական նշանակությունների շուրջ:</li> <li>• Բացահայտել միջավայրի հիվանդածին տարրերը:</li> <li>• Վերլուծել մարդու առողջության վրա ազդող գործոնները:</li> <li>• Գնահատել միջավայրի առողջարարական նշանակությունը:</li> </ul>
ԿՐԹԱԿԱՆ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ	<p><b>ԳԻՏԵԼԻՔ</b></p> <p>Բնորոշել բժշկական աշխարհագրություն գիտության ձևավորման ու զարգացման առանձնահատկությունները, մտքի զարգացման հնագույն օջախները:</p> <p>Ներկայացնել գիտության կառուցվածքը, կապն այլ գիտությունների հետ: Բացատրել գիտության սահմանային, կիրառական նշանակությունը: Վերլուծել բժշկական աշխարհագրության տեսական մի քանի դրույթներ: Բացատրել գիտության հիմնարար հասկացությունները: Վերլուծել բնական գործոնների՝ ռելիեֆի, երկրաբանական կառուցվածքի, կլիմայի, ջրերի, հողաբուսա կան կազմի առողջաբանական նշանակությունները:</p> <p>Դասակարգել բույսերն ըստ իրենց օգտակարության և կիրառության: Վերլուծել դեղաբույսերի նշանակությունը մարդու համար: Վերլուծել սոցիալ-տնտեսական գործոնների առողջաբանական նշանակությունները: Վերլուծել էկոլոգիական գործոնների առողջաբանա կան նշանակությունները: Ներկայացնել բնակավայրի(Գյումրու) բժշկաաշխարհագրական առանձնահատկությունները:</p> <p><b>ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ</b></p> <p>Գնահատել արեգակնային ճառագայթման, ռելիեֆի, երկրաբանական կառուցվածքի, կլիմայի, ջրերի, հողերի, բույսերի ու կենդանիների ազդեցություն ներք բնակչության առողջության վրա:</p> <p>Գնահատել սոցիալ տնտեսական առավել կարևոր գործոնները՝ ապրելակերպը, աշխատանքային, բնակարանային պայմանները, սնունդը:</p> <p>Գնահատել միջավայրի էկոլոգիական բնութագրիչներն ըստ միջավայրի առանձին տարրերի՝ օդի, ջրի, հողերի, բույսերի, կենդանիների:</p> <p>Գնահատել բնակավայրի(Գյումրու) բժշկաաշխարհագրական իրադրության առավել «խոցելի» տարրերը:</p> <p>Մեկնաբանել հիվանդությունների սեզոնային և աշխարհագրական՝ տարածական բաշխման գլխավոր մոտեցումները և վերհանել պատճառները:</p>

	<p>ՀՄՏՈՒԹՅՈՒՆ</p> <p>Բժշկավիճակագրական տեղեկատվության մշակման ու կիրառման ձևեր:  Բնակչության առողջության պահպանման ու վերականգման աշխարհագրական հնարավորություն ների կանխատեսում:  Բժշկաաշխարհագրական հետազոտության համա պատասխան մեթոդների կիրառում:  Տարածքի բժշկաաշխարհագրական իրադրության գնահատում:</p>
<p>ԴԱՄԸՆԹԱՑԻ ՆԿԱՐԱԳԻՐ</p>	<ul style="list-style-type: none"> <li>• ԿՐԵԴԻՏՆԵՐԻ ՔԱՆԱԿ - 4</li> <li>• ԼՍԱՐԱՅԻՆ ԺԱՄ -30</li> <li>• ԴԱՄԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ -16</li> <li>• ԳՈՐԾՆԱԿԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ -4</li> <li>• ՍԵՄԻՆԱՐ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ -10</li> <li>• ՇԱԲԱԹԱԿԱՆ ԺԱՄ -3</li> </ul>
<p>ՆԱԽԱՊԱՅՄԱՆՆԵՐ</p>	<p>Ուսումնառության նախորդ տարիներին ձառք բերված գիտելիքներ աշխարհագրության տարբեր դասընթացներց, ֆիզիկայից, բժշկագիտությունից</p>
<p>ԴԱՄԱՎԱՆԴՄԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐ</p>	<p>Դասախոսություն, բանավեճեր, քննարկումներ, զննական՝ աշխատանք քարտեզներով, վիճակագրական նյութերով, հավաքածուներով, գործնական աշխատանքներ</p>
<p>ԴԱՄԸՆԹԱՑԻ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ</p>	<p>Բժշկական աշխարհագրությունը գիտությունը, կառուցվածքը, հիմնարար հասկացությունները:  Բժշկական աշխարհագրության ուսումնասիրման օբյեկտը, գիտության կառուցվածքը: Բժշկական աշխարհագրության հիմնարար հասկացությունները, հետազոտության մեթոդները՝ քարտեզագրական, վիճակագրական:  Բնակչության առողջության վրա ազդող բնական գործոններ: Արեգակնային և տիեզերական ճառագայթումների, ռելիեֆի, կլիմայի, ջրերի, հողերի, բույսերի, կենդանիների առողջաբանական նշանակությունը:  Բնակավայրի(Գյումրիի) բնական պայմանների բժշկաաշխարհագրական գնահատումը:  Բնակչության առողջության վրա ազդող սոցիալ-տնտեսական գործոններ: Ապրելակերպի, բնակարա նային, աշխատանքային միջավայրերի, սննդի, հագուստի առողջաբանական նշանակությունը: Պրոֆեսիոնալ հիվանդություններ:  Բնակչության առողջության վրա ազդող էկոլոգիա կան գործոններ:  Նոզոաաշխարհագրություն:  Միջավայրն աղտոտող աղբյուրներ: Օդային ավազանի, ջրերի, հողի, բույսերի, կենդանիների բժշկաէկոլոգիական գնահատում: Բնակավայրի(Գյումրիի) էկոլոգիական պայմանների բժշկաաշխարհագրական գնահատումը:  Աշխարհագրական միջավայրով պայմանավորված հիվանդություններ:  Բնակավայրում(Գյումրիի) առավել հաճախակի հանդիպող հիվանդաձևեր:</p>
<p>ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ</p> <p>ՀԻՄՆԱԿԱՆ</p>	<ol style="list-style-type: none"> <li>1.Վալեյան Ա. «Գյումրի քաղաքի էկոլոգիական վիճակի բժշկաաշխարհագրական գնահատում», Ե.2004թ.</li> <li>2.Авцын А. “Введение в географическую патологию”, М. 1972г</li> <li>3. Воронин Н. “Основы медицинской и биологической климатологии”, М.1981г.</li> <li>4. Географические аспекты экологии человека”(под редакции Лебедева)</li> <li>5.Никитин Д., Ноеикова Н.”Окружающая среда и здоровье человека”, М.1997г.</li> <li>6.Новиков Ю.”Экология окружающей среды и человек”, М. 2002г.</li> <li>7.Окружающая среда и здоровье человека”(под редакции Герасимова) М. 1981г</li> </ol>

ԼՐԱՑՈՒՑԻՉ

1. “экологические и медико-географические проблемы природопользования Закавказья”, Е.1989г.  
 2. “Человек и среда”, М.1985г.  
 3. Հարությունյան Լ., Հովհաննիսյան Ռ. «Ֆիտոթերապիա», Ե.1993թ

ՄՏՈՒԳՄԱՆ ԵՎ  
 ԳՆԱՀԱՏՄԱՆ ՁԵՎԵՐԸ

Գրավոր շքանություն, 100 բալային համակարգով:  
 Ընթացիկ քննության հացաթերթիկում 8 հարցեր են 2-ը՝ 20-ական, 6-ը՝ 10-ական, իսկ ամփոփիչում 3-ը՝ 35,35 և 30 միավորային արժեքներով

ԳՆԱՀԱՏՄԱՆ  
 ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐ ԵՎ  
 ԿՇԻՌ

1. Բաղադրիչ 1- 10% (հաճախումներ)
2. Բաղադրիչ 3-20% (ընթացիկ ստուգում 1-ին)
3. Բաղադրիչ 50% (ամփոփիչ ստուգում)
4. Բաղադրիչ 10% (ընթացիկ ակտիվություն)

ԳՆԱՀԱՏՄԱՆ  
 ՄԱՆԴՂԱԿ

Տարային գնահատական	Գնահատականի պաշտոնական թվային համարժեքը	ԳՊՄԻ գնահատական
A+	5+	96-100
A	5	91-95
A-	5-	86-90
B+	4+	81-85
B	4	76-80
B-	4-	71-75
C+	3+	66-70
C	3	61-65
C-	3-	40-60
D	2	Մինչև 39

ՈՒՍԱՆՈՂԻ ԾԱՆՐԱԲԵՌՆՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԺԱՄԱՆԱԿԸ

կրեդիտ/կրեդիտ ժամ-4/120

Հ/Հ	Թ ե մ ա	Լսարանային ժամեր					Ուսանողի ինքնուրույն աշխատաժամանակը	Ուսանողի ընդհանուր աշխատաժամանակը
		Դասախոսություն	Գործնական	Լաբորատոր	սեմինար	Ուս. պրակտիկա		
1.	Բժշկական աշխարհագրություն գիտությունը, կառուցվածքը, հետազոտության մեթոդները, հիմնարար հասկացությունները:	2					2	4
2.	Բժշկական աշխարհագրության հիմնարար հասկացությունները`				2		5	7
3.	Բնակչության առողջության վրա ազդող բնական գործոններ` արեգակնային և տիեզերական ճառագայթման, ռեյիեֆի, երկրաբանական կառուցվածքի ազդեցությունները:	2					3	5
4.	Բնակչության առողջության վրա ազդող բնական այլ գործոնների` կլիմայի , ջրերի առողջաբանական նշանակությունը:	2					3	5
5.	Կլիմայի առողջաբանական նշանակությունը ,կլիմայական գոտիների բժշկաաշխարհագրա-կան գնահատում:				2		6	8
6.	Բնակչության առողջության վրա ազդող բնական այլ գործոններ` հողեր, բույսեր, կենդանիներ:	2					3	5
7.	Գյումրու բնական պայմանների` բժշկաաշխարհագրական գնահատումը:				2		6	8
8.	Դեղաբույսերի նշանակությունը և տարածումը: Կենդանիների առողջաբանական 2 նշանակությունը		2				6	8
9.	Բնակչության առողջության վրա ազդող սոցիալ տնտեսական գոր-ծոններ, Ապրելակերպի և աշխատանքային միջավայրի առողջաբանական նշանակությունը:	2					3	5
10.	Ապրելակերպի և աշխատանքային միջավայրի առողջաբանական նշանակությունը:				2		6	8
11.	Բնակչության առողջության վրա ազդող սոցիալ տնտեսական գոր-ծոններ` սնունդ, հագուստ, բնակարանային պայմաններ:	2					4	6
12.	Մննդի առողջաբանական նշանակությունը: Ազգային խոհանոցներ:		2				6	8
13.	Բնակչության առողջության վրա ազդող էկոլոգիական գործոններ:	2					3	5
14.	Հիվանդությունների աշխարհագրական տարածման առանձնահատկությունները	2					4	6
15.	Բնակչության առողջության վրա ազդող էկոլոգիական գործոններ: Գյումրիում առավել տարածված հիվանդաձևերը				2		6	8
Ընթացիկ ստուգում 1								11
Ամփոփիչ ստուգում								13
Ընդամենը								120